

ՀԱՅ ԿԱՐԴՈԼԻԿԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ.

Եակ Մագրում (№ 104) կարգում ենք. «Հայ-կաթոլիկները Ռուսաստանում՝ 60-65 հազար են. նրանք ապրում են գլխաւորապէս Խովկասում՝ Թիֆլիսի, Քութայիսի, Երևանի և Կարսի նահանգներում և Բաթումի շրջանում ու Խրիմում։ Մինչեւ այսօր նրանց հոգեոր գործերը վարում էր Տիրասպոլի հռովմէական-կաթոլիկ եպիսկոպոսը, որ ապրում է Սարատովում։ 1910 թուի օգոստոսի 26-ից Հայ կաթոլիկները բաժանուել են առանձին թեմ, առաջնորդի ընակավայրը նշանակուել է Թիֆլիսը։ Հայ-կաթոլիկները վաղուց էին գործում իրանց եկեղեցական գործերում վարչական ինքնուրոյնութեան, բայց այժմ յաջողուեց աջակցութեամբ Խովկասի վոխարքայ Գրաֆի. Ի. Վորոնցով-Դաշկովին։ Հայ կաթոլիկների թեմը իսկապէս հաստատուած է և գործում է անցեալ աշնանից։ Թեմը կառավարում է Սարգիս վարդապետ Տէր Արքահամեանը, որը առ այժմ կոչում է առաքելական կառավարիչ, այնու, որ եպիսկոպոս ձեռնադրուելուց յետոյ կարդուի առաջնորդ Ռուսաստանում նոր կազմուած Հայ կաթոլիկ թեմի։

Տէր Արքահամեան վարդապետի ձեռնադրութիւնն ու թեմական առաջնորդ կարդուելը արգելքի է հանդիպում նրանով, որ Թիֆլիսում, այսինքն առաջնորդի ընակավայրում, չկայ Հայ կաթոլիկ եկեղեցի։ Այնտեղի կաթոլիկան եկեղեցիները պատկանում են հռովմէական կաթոլիկ ծխերին, իսկ Հայերը զբակուած են մայրենի լեզուով ժամ ասելու իրաւունքից։

Այժմ Թիֆլիսում ծրագրուում է Հայ կաթոլիկական նոր աւագ եկեղեցի և ծխուկան դպրոց կառուցանել, որոնց համար 100-150 հազար ժամանակուից Թիֆլիսում նուիրատուութիւններն արդէն սկսուած են և նուիրաբերում են ոչ միայն Հայ կաթոլիկները այլև Հայերը։ Արովհետեւ եկեղեցու դոյութեան հետ էլ կապուած է անկախ թեմի գոյութիւնը, իսկ այս երկուսին էլ կա-

պուած է և այն, թէ 60-65 հազար հայ կաթոլիկները սկզբէ
յարեն հայ կենսակրթութեան, թէ լատինականութեան
ազգեցութեան տակ ընկնելով և մոռանալով մայրենի
լեզուն (իրանց դպրոցն ու ծուխը չունենալու պատճառով)
կը մնան հայութիւնից անջատուած։

Բագւումն էլ դրամ՝ հանդանակելու համար մայիսի
9-ին Թիֆլիսից դնացել է Ռուսաստանի հայ կաթոլիկ-
ների հոգեոր կառավարութեան անդամ, Թիֆլիսի հայ-
կաթոլիկների ծխառէր Մխիթարեան միաբանութեան
պատկանող Հ. Դիոնիսիոս Կալատաղեանը։



Օ Տ Ա Ր Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

ՊՐԱԽՈՍԼԱԲ ԵԿԵՂԵՑԻ

Առև Սրբ. Սիմոնի նոր օքեր—պրօկուրօ

«Նոր Վրեմյա» (Մայիս 5) հաղորդում է, որ Սրբ. Սի-
մոնի նոր օքեր-պրօկուրօր վ. կ. Սարլերը յայտնել է, թէ
ինքը շի կամենում քնակուել Լիտէյնի փողոցի վերայ
գտնուող այն տանը, ուր քնակում էր իւր նախորդը. այդ
տան պահպանութիւնը տարեկան 25 հազար ռուբլի է
նատում։ Բայ Սարլերի՝ ուր տունը սկզբ է ծառայի
պրաւօղաւ եկեղեցու օգտին։ Այդ տեղը սկզբ տրուի հո-
գեսոր զբոյցների, երդիշների ժողովների, կրօնական-բա-
րոյական ընթերցումների հին։ Համար։ Այդուղ կարող է
զետեղուել քարողական գրադարանը, նոյնպէս կարելի է
յատկացնել եկող քարողիշների ընակութեան համար։

— «Նոր Վրեմյա»-ում Մ. Մենշիկովը քնորոշելով Սրբ.
Սիմոնի օքեր-պրօկուրօր Ա. Մ. Լուկիանովի ու նրա տեղ
նշանակուած վ. կ. Սարլերի գործունէութիւնը, և տխուր
գոյներով նկարագրելով պլատուալ եկեղեցու դրութիւնը,
ասում է.